ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

27-ը դեկտեմբերի *2024թ.* *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ՄԽ-Ո-03

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱՐԱՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետով՝ մրցութային խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել թեկնածուի՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների ստուգման հարցարանը (այսուհետ՝ Հարցարան)՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ՍՈՆԱ ԽԱԼԱՖՅԱՆ
ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ
ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ

Հավելված
Մրցութային խորհրդի
2024թ. դեկտեմբերի 27-ի
թիվ ՄԽ-Ո- 03 որոշման

ՀԱՐՑԱՐԱՆ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ

1) Բնութագրեք Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի էությունը:
2) Սահմանադրության համաձայն՝ ի՞նչ են ինքնավար մարմինները, և ի՞նչ իրավական ակտով են սահմանվում ինքնավար մարմինների անկախության երաշխիքները:
3) Հիմք ընդունելով Սահմանադրությունը՝ ներկայացրեք օրինականության սկզբունքի էությունը:
4) Ի՞նչ է ենթադրում Սահմանադրությամբ ամրագրված համաչափության սկզբունքը:
5) Նկարագրեք Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքի էությունը:
6) Ի՞նչ է ենթադրում Սահմանադրությամբ ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքը, և որո՞նք են այդ իրավունքի սահմանափակման հիմքերը.
7) Թվարկեք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում ամրագրված վարչարարության սկզբունքները և նկարագրեք դրանց էությունը:
8) Ի՞նչ է վարչական ակտը, և որո՞նք են վարչական ակտի տեսակները:
9) Ըստ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ որո՞նք են բարեվարքության համակարգի տարրերը:
10) Ի՞նչ է հանրային ծառայությունը և հանրային ծառայության պաշտոնը: Որո՞նք են հանրային ծառայության տեսակները:
11) Թվարկեք պետական պաշտոնների տեսակները՝ ներկայացնելով դրանցից յուրաքանչյուրի բնութագիրը:
12) Որո՞նք են համարվում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար թույլատրելի նվերները:
13) Ի՞նչ է «շահերի բախումը»:
14) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով ովքե՞ր են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականությունը կրող սուբյեկտները:

15) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով ի՞նչ ժամկետներում են ներկայացվում գույքի, եկամուտների , շահերի և ծախսերի հայտարարագրերը:
16) Ի՞նչ պատասխանավություն է նախատեսված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի սահմանված՝ գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականության չկատարման դեպքում:
17) Ներկայացրե՛ք գույքի հայտարարագրի բովանդակությունը:
18) Ներկայացրե՛ք ծախսերի հայտարարագրի բովանդակությունը:
19) Ներկայացրե՛ք եկամուտների հայտարարագրի բովանդակությունը:
20) Ի՞նչ են իրենցից ներկայացնում և ի՞նչ գործառույթներ ունեն հանրային ծառայողների էթիկայի հանձնաժողովները և բարեվարքության հարցերով կազմակերպիչը:
21) Ու՞մ կողմից և ինչպե՞ս են սահմանվում հանրային ծառայողների վարքագծի կանոնները:
22) Ինչպե՞ս է կազմավորվում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որո՞նք են Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները:
23) Որո՞նք են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պահանջները/սահմանափակումները: Անկախության և անձեռնմխելիության ի՞նչ երաշիքներ ունի Հանձնաժողովի անդամը:
24) Որո՞նք են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի և անդամի լիազորությունների դադարման, դադարեցման և կասեցման հիմքերը:
25) Ներկայացրե՛ք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման կարգը:
26) Որո՞նք են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները:
27) Որո՞նք են անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից վարչական վարույթ հարուցելու հիմքերը:
28) Նկարագրեք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող բարեվարքության վերաբերյալ ուումնասիրության գործառույթի էությունը:
29) Բնութագրե՛ք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հայտարարագրերի ստուգման և վերլուծության գործառույթի էությունը:
30) Ի՞նչ է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վերանայման վարույթը, և որո՞նք են դիմում ներկայացնելու հիմքերը:
31) Ներկայացրե՛ք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության հանրային հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքի էությունը:
32) Ներկայացրե՛ք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունների բողոքարկման կարգը:
33) Ներկայացրե՛ք «ազդարարում» և «ազդարար» հասկացությունները, ազդարաման տեսակները:

34) Ի՞նչ է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը:

35) Ըստ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի՝ որո՞նք են ուսումնասիրություն սկսելու հիմքերը:

36) Ըստ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ո՞ր գույքն է համարվում ապօրինի ծագում ունեցող:

37) Ներկայացրե՛ք ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի նպատակները և նույն կոնվենցիայով սահմանված «հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ», «հիմնական իրավախախտում», «սառեցում» կամ «առգրավում», «բռնագրավում» հասկացությունների բովանդակությունը:

38) Ներկայացրե՛ք պաշտոնատար անձանց կաշառելու իրավախախման բովանդակությունը՝ ըստ ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի:

39) Բնութագրեք ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով սահմանված ապօրինի հարստացման և պաշտոնական դիրքի չարաշահման իրավախախտումների էությունը:

40) Ներկայացրե՛ք ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով սահմանված՝ մասնագիտացված հակակոռուպցիոն մարմինների բնորոշումը և այդ մարմիններին ներկայացվող հիմնական պահանջները:

41) Ըստ ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի ո՞ր իրավախախտումների և ի՞նչ պայմանի առկայության դեպքում է իրականացվում հանձնումը:

42) Համաձայն ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի՝ յուրաքանչյուր մասնակից պետություն գույքի անմիջական վերադարձմանն ուղղված ինչպի՞սի միջոցներ պետք է ձեռնարկի:

43) ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով սահմանված իրավախախտումներից որևէ մեկի կատարման հետևանքով ձեռք բերված գույքի առնչությամբ միջազգային համագործակցության միջոցով գույքի առգրավման ինչպիսի՞ մեխանիզմներ են առկա:

44) Մասնավոր հատվածում կոռուպցիայի կանխարգելման նպատակով ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով սահմանված ինչ միջոցներ են պարտավոր ձեռնարկել մասնակից պետությունները:

45) Իրավաբանական անձանց ի՞նչ պատասխանատվության միջոցներ են նախատեսված ՄԱԿ–ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայով:

46) Որո՞նք են ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի մասնակից պետության պարտավորությունները պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ:

47) Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի մասին կոնվենցիայով սահմանված վնասի փոխհատուցման ի՞նչ պայմաններ են սահմանված:

48) Վնասի փոխհատուցման պահանջի համար հայցային վաղեմություն ի՞նչ ժամկետներ են սահմանված Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի մասին կոնվենցիայով:

49) Բնութագրեք Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի մասին կոնվենցիայով սահմանված «իրավաբանական անձ» հասկացության էությունը:
50) Ո՞ր մարմինն է հսկողություն իրականացնում Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի մասին կոնվենցիայի Կողմերի՝ Կոնվենցիայի իրականացման նկատմամբ:
51) Կարո՞ղ է արդյոք Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի մասին կոնվենցիայի Կողմը դադարեցնել Կոնվենցիայի գործողությունը և ի՞նչ կարգով:

Հարցարանի իրավական հիմքերը՝

Ա) Ներպետական օրենսդրություն

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ Քրեական օրենսգիրք
3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
4. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք
5. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք
6. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք
7. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք
8. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք

Բ) Միջազգային փաստաթղթեր

9. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա
10. Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի մասին կոնվենցիա
11. Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի մասին» քաղաքացիական իրավունքի մասին կոնվենցիա